Արդեն հեղափոխությունից առաջ նոր սերունդը հրաժարվել էր շմոշկից և սկսել էր հագնել եվրոպական՝ ռուսական ձևի կոշիկներ։

Նախասովետական Զանգեզուրի չքավոր բնակչությունը չէր կարող ունենալ նույն տեսակի զարդեր և թանկարժեք կտորներից շորեր, ինչպես հարուստները։ Բայց քանի որ զարդարանքի ամեն մի տեսակն ուներ իր կոնկրետ մագիկ նպատակադրումը, չէր կարելի, որ և չքավոր կինը կամ աղջիկը չունենար գոնե նրանցից գլխավոր տեսակները։ Բայց նա գործածում էր զարդարանքը կեղծ մետաղից և ակներից։ Զարդարանքը ժառանգվում էր սերունդից սերունդ և նույնիսկ շատ չքավոր ընտանիքներում համարվում էր անհրաժեշտ կնոջ պտղաբերությունը և ընտանիքի դրվագը պահպանելու համար։ Տղամարդկանց և կանանց զգեստների ձևերը թե՛ հարուստների և թե՛ չքավորների մոտ նույնն էին ազգային տեղական ոճի տեսակետից, բայց չքավորները նույն ձևի պատրաստում էին հասարակ կտորներից և էժանագին, չէին ունենում մի քանի ձեռք շորեր. բայց չքավոր կնոջ կլոխ շինելու բոլոր մանրամասնությունները պահպանվում էին ավելի հասարակ և էժանագին նյութերից։ Հարկե չքավորները հագնում էին իրենց զգեստները մինչև նրանց ծվեն-ծվեն լինելը։

Սովետական օրով հետզհետե և Զանգեզուրում քաղաքի ձևերի շորերը փոխարինեցին տեղական ազգայիններին։ Այնուամենայնիվ չի կարելի չնշել, որ մեծահասակ կանայք առայժմ մեծ դժվարությամբ են հրաժարվում իրենց կլոխը շինելուց ըստ ադաթի՝ թե սովոր լինելու պատճառով և թերևս նաև այն պատճառով, որ նրանք դեռ լիովին չեն հաղթահարել իրենց այն համոզմունքը, թե կլոխ շինելը ապահովում է տան բարեկեցությունը։ Ինչ վերաբերում է երկու սեռի երիտասարդներին, ապա նրանք լրիվ անցել են ժամանակակից քաղաքի զգեստների ձևերին, որոնք շատ ավելի հարմար են և առողջապահիկ։

Տղամարդիկ ավելի հեշտությամբ անցնում են քաղաքի շորերին, նամանավանդ, որ դրանք շատ ավելի հարմար են աշխատանքի համար և մատչելի էն, քան ազգային զգեստները։